# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 936

*03 հուլիս 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2017 թվականի N 220-Ա - N 223-Ա որոշումները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Էվոյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2017 թվականի N 220-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Սուրեն Սիմոնի Պետրոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի վկայականը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Սուրեն Սիմոնի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել ք. Ալավերդի, Ջրավազան թաղամաս, N 67 փոստային հասցե՝ սեփականության իրավունքի վկայականում սխալմամբ գրված ք. Ալավերդի, Ջրավազան N 103 հասցեի փոխարեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ**

2017թ. հունիսի 30

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2017 թվականի N 221-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ՄԱՌԱՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 15.06.2017թ. N 193-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 26062017-06-0040 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Տիգրան Գագիկի Մաթոսյանն ընդունել է բաց պատշգամբով մառանը, սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահաթ թաղամաս, N 2/28-17/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 15.06.2017թ. N 193-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 26.7 քմ արտաքին մակերեսով (23.4 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով մառանը՝ 45924 (քառասունհինգ հազար ինը հարյուր քսանչորս) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00352 հա մակերեսով հողամասը՝ 18586 (տասնութ հազար հինգ հարյուր ութսունվեց) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Տիգրան Գագիկի Մաթոսյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում բաց պատշգամբով մառանի և սպասարկման համար զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2017թ. հունիսի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2017 թվականի N 222-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Կամո Նիկալի Վարոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի վկայականը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/32 շենքի 1-ին հարկում գտնվող, Կամո Նիկալի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող, 62.2 քմ մակերեսով տարածքին տրամադրել Սանահին Սարահարթ թաղամաս, N 2-32/16 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ**

2017թ. հուլիսի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2017 թվականի N 223-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով լիազորված անձ Հրաչիկ Թանդիլյանի դիմումը, սեփականության իրավունքի N 2792046 վկայականը, առք ու վաճառքի պայմանագիրը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

«ՎԱԼԼԵՔՍ ԿԱՊԻՏԱԼ» Փակ բաժնետիրական ընկերության կողմից առք ու վաճառքի պայմանագրով ձեռք բերված, Մարքսի փողոց, N 3 հասցեում գտնվող, արտադրական նշանակության շենքի 120.0 քմ մակերեսով տարածքին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել Սպանդարյան փողոց, N 7/7 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ**

2017թ. հուլիսի 03
ք. Ալավերդի